ՍՅՈՒՆԻՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 323 (479.25):36
ԳՄԴ 66.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94
Ս 637

Ս 637 **Սյունիք: Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին.** - Եր.: Տնտես. բարեփոխ. վերլուծական - տեղեկ. կենտրոն, 2012. - 66 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Սյունիքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 323 (479.25) : 36
ԳՄԴ 65.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-8-4

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Փարավոն Միրզոյան, Սյունյաց աշխարհ (2011)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Սյունիք

Հայաստանի հարավում, ծաղկաբույր լեռների հովիտներում փռվել է հինավուրց մի երկիր, ուր մարդն արծվի ճախրանքին վերից է նայում: Լեռնահայաստանն արարելիս բնությունն ասես տքնել է իր արվեստի ողջ զորությամբ ու հմայքով. արևմուտքից՝ արևելք, հյուսիսից՝ հարավ ու վերից՝ վար:

Լեռնահայաստանում արարիչը ժայռերը հյուսել է երկնքին ու ամպերի արցունքը խառնել ջրերին: Երկնահաս սլացքում խոյանում են սյունաց լեռները. անմահների անխախտ գահեր են ասես Կապուտջուղի, Խուստուփի, Իշխանասարի ու Արամազդի գագաթները, որոնց հայացքից ակամա ուղղվում է մահկանացուի մեջքն ու կուրծքը ծփում հպարտությամբ: Գահավեժ բարձունքներից սլանում են վտակները Սիսականում ու միաբան հորդանում Որոտանի, Ողջիի, Մեղրի գետի ու Ծավի կիրճերում: Զանգեզուրի ձորերում ղողանջում է ժայռերի լռությունն ու մոլորվում է արևի շողը Մթնաձորի թավուտներում: Ճերմակ հոգոցով Զանգեզուրի հողն է համբուրում Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը: Այծ-

յամն ու հովազը, արջն ու վարազը, տանձենին ու զանգակածաղիկը տանտեր են այստեղ:

Տանտեր է և մարդն ու տանտիրոջ վստահությամբ ու հոգածությամբ հազարամյակներ շարունակ օգտվել, շահել ու բազմապատկել է բնության պարգևները: Ծավի կիրճում ծառապաշտ հայը Սոսյաց անտառ է տնկել՝ բնական սոսիների ամենահին ու ամենախոշոր անտառը ողջ աշխարհում: Հաստաբեստ ու սլացիկ բազմադարյա ծառերը, որոնց սաղարթների տակ դադար են առել հայոց արքաներն ու սպարապետները, հայերեն սոսափում են ու վերապատմում հինավուրց ասքերը: Ավանդությունն ասում է, որ հայոց սոսիները չեն դալարում օտար հողում ու ասպատակողի հրից մոխրացած՝ վերընձյուղվում են կրկին ու կրկին:

Տանտեր է հայը Սյունիքում վաղնջական օրերից: Ութսուն դար առաջ, դեռ պղնձաքարի դարում, մարդն այստեղ ապրում էր շուրջ երկու հազար մետր բարձրության վրա. նման բարձրունքում երկրագործ մարդու հետք կամ բնակատեղի չի հայտնաբերվել աշխարհում ոչ մի այլ տեղ:

Սյունիքի լեռնաշխարհից թևավորված մարդն այստեղ առաջին անգամ հայացքն ուղղել է աստղերին ու հմայվել աստղերի հավերժական պարով: Ութսուն դար շարունակ հարավից հյուսիս ձգվում են կարմրավուն հսկաների շարքերն ու դրանց շրջագիծն անդավ վկան է հայոց հանճարի: Աշխարհում մեգալիթյան հնագույն կոթողներից մեկը, թերևս, հնագույն աստղադիտարանը՝ Զորաց Քարերը, Սիսականում կանգնեցվել են Սթոունհենջի համալիրից երեսուն դար առաջ, և մայաներից քառասուն դար առաջ մեկնել են Օրիոնի՝ Հայկի գոտու եզրին ծավալված միգամածության խորհուրդը: Բազում դարեր են անցել, ապառաժների ձեռակերտ աչքերը դեռ երկինք են նայում սիրահարի պես, փորձելով որսալ աստղերի հայացքը, որ դարերի հեղեղում վաղուց փոխել են ընթացքը:

Սիսական աշխարհում հայը մեհյաններ է կանգնեցրել իր աստվածներին ու հազարամյակներ շարունակ աղոթել բերքի ու բարօրության համար: Հայն առաջինը Սյունիքում է դարձել քրիստոնյա՝ հավատալով փրկչի առաքյալի ավետիսին: Հայը վանք է կառուցել ու եկեղեցի, դպրանոց ու գրատուն, աղբյուր ու ձիթհան, ավետարան է ծաղկել, ու ստեղծել առաջին մատենադարանը՝ ավելի քան տասը հազար ձեռագրով, հաղթել է մտքի ու

ոգու բազում մրցություններում: Շուրջ հազար տարի առաջ Տաթևի վանքում միաժամանակ ուսանել ու տքնել է հազար միաբան՝ ավելի շատ քան ժամանակի վանական համալիրներում: Ճոճվող գավազան է կառուցել, որ տասը դար կանգուն է ու անխաթար՝ չխոնարհվելով ոչ մի երկրաշարժի ուժի առաջ: Դարեր առաջ դասարան է տաքացրել, որ ամառ թե ձմեռ կրթություն առնի ուսումնասեր հայ երիտասարդը:

Հոյակերտ են ու առինքնող հայոց հավատի տաճարները սյունաց աշխարհում. Տաթև ու Վահանավանք, Որոտնավանք ու Սիսավան, Մեծ Տղա ու Փոքր Տղա: Զանգեզուրի լեռներում վեհացող վանքերի ու ձորերում ծվարած եկեղեցիների պատմությունը հատորներ է լցրել: Երբ ջարդարար նվաճողը կործանել է անապատը, հայը կառուցել է մյուսն ու մշտապես նորոգել իր վանքերը, ավերված եկեղեցու փոխարեն կառուցել երկուսը, այրված ձեռագրի փոխարեն՝ ծաղկել երեքը:

Սյունաց աստղաձույլ երկնքի տակ հայի իմաստությունը «Ադամագիրք» ու «Դրախտագիրք» է ստեղծել, մեկնել է կորուսյալ դրախտի խորհուրդն ու երգել դրախտից արտաքսված մարդու տառապանքը: Որոտանի շառաչին ունկնդիր հայը միջնադարում հաստատել է, որ նյութական աշխարհն ինքնուրույն իրական գոյությամբ է օժտված: Մազեղեն հագուստի ու պարեգոտի խստությամբ ապրող վարդապետը Սյունաց հողում հայոց հավաքականության ուժի խորհուրդն ընկալելով, մինչև կյանքի վերջը հայ ոգու ու հավատի միաբանություն է քարոզել՝ դարերի միջով խոսելով սերունդների հետ: Ալպիական բնաշխարհի զավակի արձակը երգել է Մթնաձորի թավուտներն ու զանգեզուրցու ներաշխարհը. երգել է ցանկացած պոետի տաղից հնչուն ու համոզիչ:

Եվ հայոց քարափների երգիչը եղել է ու հավետ կմնա հայոց բնաշխարհի բոլոր ժամանակների մեծագույն քնարերգուն. սահյանական սերն ու նվիրվածությունը առ երկիր հայրենին դեռ դարեր անց հային պիտի պահեն հայ ու դարձի բերեն տոհմի կանչով:

Իրավամբ, Սյունիքի մեծագույն հարստությունը մարդիկ են. աստղափայլ մեծություններ՝ հայոց հպարտությունն ու հույսը, և հասարակ աշխատավորներ՝ շինական, ուսուցիչ ու ռազմիկ. հայոց զա՛րմը, հա՛յը, մե՛նք, դու՛:

Մարդը

Սյունիքի մարզում 2006-2010 թվականներին ծնվածների թվաքանակն **ավելացել է** գրեթե 5 տոկոսով, ընդ որում, նախորդ տարիների ընթացքում ծնունդների թվաքանակի նվազման միտումը վերջին տարիներին փոխարինվել է աճով:

Ծնվածների քանակը Սյունիքի մարզում (մարդ)



2007 թվականից սկսած՝ բնակչության մահացության մակարդակը Սյունիքի մարզում **նվազել է**: 2010 թվականին Սյունիքի մարզում հազար բնակչի հաշվով մահացածների թիվն ավելի ցածր էր, քան միջինը հանրապետությունում և գրե-

Ամուսնությունների քանակը Սյունիքի մարզում (միավոր)





թե նույնքան, որքան մայրաքաղաք Երևանում:

Նախոդ տասնամյակում ապագայի հանդեպ սյունիքցիների վստահության ամրապնդմանն ու կենսամակարդակի բարելավմանը զուգընթաց զգալիորեն **ավելացել է** ամուսնությունների թիվը:

2011 թվականին Սյունիքի մարզում գրանցվել է երկու երրորդով ավելի ամուսնություն, քան 2001 թվականին:

Սյունիքի մարզում **բարելավվել է** միգրացիոն ընդհանուր պատկերը. 2007 թվականից սկսած՝ տարեց-տարի ավելացել է Սյունիք եկողների թիվը: 2011 թվականին Սյունիքի մարզ եկողների թիվը շուրջ մեկ տասներորդով ավելի էր, քան 2006 թվականին:

Տնտեսության սյուները

Նախորդ տասնամյակում Սյունիքի մարզում **աննախադեպ կերպով ավելացել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը. 2000-2002 թվականներին ընթացիկ գներով տարեկան միջինում ավելանալով շուրջ 23 տոկոսով՝ հաջորդ երեք տարիներին՝ 2003-2005 թվականներին, արդ-

յունաբերական արտադրանքի ծավալի տարեկան աճն ընթացիկ գներով միջինում կազմել է **ավելի քան 60 տոկոս**: Թեպետ 2006-2009 թվականներին, նախ՝ միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների կտրուկ անկման, ապա նաև՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում մարզի արդյունաբերությունը հայտնվել էր դժվարին իրավիճակում, այդուհանդերձ, արդեն 2010 թվականին, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մարզի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններին տրամադրված շոշափելի աջակցության շնորհիվ, Սյունիքի մարզում արդյունաբերական ար-

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

Սյունիքի բաժինը ՀՀ մարզերի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում, 2011թ.



տադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատ **աճել էր շուրջ 60 տոկոսով**, իսկ 2011 թվականին՝ ավելացել ևս մեկ հինգերորդով:

2011 թվականին հանրապետության մարզերում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալի գրեթե մեկ երրորդն արտադրվել է Սյունիքում:

2011 թվականին Սյունիքում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է մայրաքաղաք Երևանում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալի **40 տոկոսից ավելին**, այն դեպքում, երբ երկրում արդյունաբերական հզորությունները գերազանցապես կենտրոնացած են մայրաքաղաքում:

Սյունիքը հանրապետության հանքագործական արդյունաբերության բացարձակ **առաջատարն է**. 2011 թվականին հանրապետությունում հանքագործական արդյունաբերության ծավալի 90 տոկոսն արտադրվել է Սյունիքում: Միաժամանակ, հանքագործական արդյունաբերությունը Սյունիքի մարզի արդյունաբերության սյունն է. 2011 թվականին Սյունիքի մարզում արդյունաբերական արտադրանքի շուրջ 85 տոկոսը բաժին էր ընկնում հանցագործական արդյունաբերությանը:

2011 թվականին Սյունիքի մարզում հանքագործական արդյունաբերութ-

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

Միայն 2011 թվականին՝ մեկ տարում, Սյունիքի մարզում ընթացիկ գներով արտադրվել է նույնքան ծավալի հանքագործական արդյունաբերության արտադրանք, որքան ողջ հանրապետությունում 2001-2004 թվականներին՝ չորս տարում միասին:

յան արտադրանքի ծավալն ընթացիկ գներով **գերազանցել է** 2001-ից 2010 թվականներին՝ առանձին-առանձին, Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալները: 2011 թվականին Սյունիքի մարզում ընթացիկ գներով արտադրվել է 30 տոկոսով ավելի մեծ ծավալով հանքագործական արդյունաբերության արտադրանք, քան 2001-2011 թվականներին՝ 11 տարում, հանրապետության մյուս բոլոր մարզերում միասին: 2011 թվականին Սյունիքի մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով **ութապատիկ գերազանցել է** 2001 թվականի արտադրանքի ծավալը:

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը ՀՀ մարզերում, 2011թ.



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալով Սյունիքը հանրապետության **երրորդ մարզն է**. 2011 թվականին Հայաստանի մարզերում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման համախառն ծավալի մեկ վեցերորդը բաժին է ընկնում Սյունիքի մարզին: 2011 թվականին

Սյունիքի մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալն ընթացիկ գներով երեքուկես անգամ գերազանցել է 2004 թվականի ծավալը:

2002 թվականից Սյունիքի մարզում **տարեց-տարի ավելացել է** մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը. 2002-2007 թվականներին Սյունիքում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալի տարեկան աճը **միջինում կազմել է շուրջ 15 տոկոս**: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Սյունիքում 2008-2009 թվականներին մշակող արդյունաբերությունն անկում էր ապրել, սակայն 2010-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերի արդյունքում մարզի մշակող արդյունաբերությունը վերականգնել է աճի նախաճգնաժամային տեմպերը, իսկ արտադրանքի ծավալը տարեկան **ավելացել է շուրջ 20 տոկոսով**:

Արդյունքում, 2011 թվականին Սյունիքի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի եռապատիկն էր:

Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Սյունիքը մանածագործական արտադրատեսակների արտադրության առաջատարն է հանրապետության մարզերի թվում: Մանածագործական արտադ-

2010 թվականին Սյունիքում է արտադրվել հանրապետության մարզերում արտադրված մանածագործական արտադրանքի երեք քառորդից ավելին:

ռատեսակների արտադրանքի ծավալով Սյունիքը Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին:

2010 թվականին հանրապետության մարզերում պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (բացի մեքենաներից և սարքավորանքից) համախառն ծավալի շուրջ 40 տոկոսն արտադրվել է Սյունիքում:

Սյունիքի մարզը պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության ծավալով հանրապետությունում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին. 2010 թվականին Սյունիքում թողարկվել է այս արտադրատեսակի **ավելի մեծ ծավալով արտադրանք**, քան հանրապետության ութ մարզերում միասին:

Մանածագործական արտադրատեսակների (արտաքին շրջան) և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (բացի մեքենաներից և սարքավորանքից, ներքին շրջան) ծավալները ՀՀ մարզերում, 2010թ.



Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը «Լեռ-Էքս» ընկերությունում

Սյունիքը հանրապետության մարզերի թվում երրորդն է էլեկտրական սարքավորումների արտադրության ծավալով՝ Լոռու և Կոտայքի մարզերից հետո:

2010 թվականին **«Լեռ-Էքս»** ընկերությունը Կապան քաղաքից 50 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասում կառուցել է ստորգետնյա հանք և գործարկել է տարեկան **150 հազար տոննա** հանքաքարի վերամշակման արտադրողականությամբ ֆլոտացիոն ֆաբրիկան՝ համապատասխան թափոնամբարով: Ընկերությունը թողարկում է 51 տոկոս պարունակությամբ մոլիբդենի և 25-28 տոկոս պարունակությամբ պղնձի խտանյութեր: Ձեռնարկությունը տարեկան թողարկում է շուրջ **500 տոննա մոլիբդենի և 2,000 տոննա պղնձի** խտանյութ:

2011 թվականին **Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում** արդիականացվել է արտադրությունը, բարձրացվել է աշխատակիցների որակավորումը, փոփոխվել ձեռնարկության կազմակերպական կառուցվածքը, ավարտվել է հանքավայրի տեխնիկական վերազինումը: Կառուցվել է հարստացուցիչ ֆաբրիկայի **նոր մասնաշենք**՝ հագեցած նորագույն ֆլոտացիոն մեքենաներով: Նոր տեխնոլոգիաների շնորհիվ արտադրության ծավալը 2012 թվականին **կավելանա** մեկ վեցերորդով:

Սիսիանի «Վի Էյջ Սթոուն» քարերի մշակման գործարանի արտադրամասը

Սիսիանի **«Վի Էյջ Սթոուն»** քարերի մշակման գործարանը արդյունահանում և մշակում է բնական քարեր: Գործարանը հագեցած է ժամանակակից սարքավորումներով, տեխնոլոգիական սխեման հնարավորություն է տալիս կազմակերպել անթափոն արտադրություն: 2009 թվականին ընկերությունը հիմնել է քարերի ձևավոր մշակման արտադրամաս:

Հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը խթանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկեր է տրամադրել **«Զանգեզուր մայնինգ»**, **«Արմենիա մոլիբդեն Փրոդաքշն»** և **«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ»** ընկերություններին՝ **44 միլիոն ԱՄՆ դոլար** ընդհանուր ծավալով, ինչի շնորհիվ Սյունիքի մարզի համար կենսական նշանակություն ունեցող ձեռնարկությունները կարողացել են հաղթահարել համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքները:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում **փոքր և միջին ձեռնարկություններին** աջակցության նպատակով տարբեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրվել են շուրջ **20 միլիարդ դրամ** ընդհանուր ծավալով վարկեր, ընդ որում, 2011 թվականին՝ 2010 թվականի համեմատ տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է շուրջ մեկ հինգերորդով:

2011 թվականներին Սյունիքի մարզում իրականացված ներդրումային

35 տարվա «ջեյրանը» դեռ չի դավաճանել

Էքսկավատորավար Ռազմիկ Մովսիսյանը տասնյոթ տարեկանից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում է աշխատում: «Քաջարանում չկա ընտանիք, որի անդամներից գոնե երկուսը այստեղ չաշխատեն»,– ասում է վաթսունամյա Ռազմիկը: Կինն ու տղան էլ են աշխատում կոմբինատում: Տղան՝ Տիգրանը իր հերթափոխի պետն է: «Դե, գործի տեղը ենթարկվում եմ բնականաբար, կարգապահությունը չեմ խախտում, տանը մեկ-մեկ հայրական խրատներ եմ տալիս»,– ասում է Ռազմիկ Մովսիսյանը՝ չկտրվելով գործից: Տարեկան միջին աշխատավարձը 703 հազար դրամ է. գործավարձային է, աշխատում ես՝ ստանում ես: Կոմբինատի բաց հանքի ամենաբարձր կետում է աշխատում՝ 2250 մ բարձրության վրա: Ազատ ժամերին Մարքսի «Կապիտալն» է կարդում, տնտեսությունն է փորձում հասկանալ: «Ճգնաժամ կոմբինատը չտեսավ, դե երկրի նախագահն էլ աջակցեց, կոմբինատի ղեկավարությունն էլ իր հերթին էր քաջալերում, թե՝ լավ կլինի, ու ապագան մերն է»,– ասում է զրուցակիցս: Հայաստանի անկախության տասնյոթերորդ տարեդարձի առթիվ՝ արժանացել է «Անանիա Շիրակացի» մեդալի: 2006 թվականին էլ ընկերության խորհրդի որոշմամբ պարգևատրվել է 5 միլիոն դրամով, և Երևանում տուն է գնել: «Ուսանող երեխա ունեմ, մտածեցի ճիշտն էդա»,– անկեղծանում է իր հողին նվիրված մարդը: Նշենք, որ կոմբինատի խորհրդի որոշմամբ, ամեն տարեվերջին, ձեռնարկության եկամուտների հինգ տոկոսի չափով պարգևատրվում են լավագույն աշխատողները:

«Աշխատող մարդը միշտ մի գործ կգտնի»,– ասում է Ռազմիկ Մովսիսյանն ու խնդրում չխանգարել իրեն: «Երբ զրուցելով եմ աշխատում, քիչ եմ փորում ու աշխատավարձս քիչ կլինի այս ամիս»,– ժպտալով ասում է էքսկավատորավարը: «Ջեյրանս երեսունհինգ տարվա իմ ընկերն ա, դարդ ու ցավս էս հանքում իրան եմ վստահում»,– հրաժշատ տալուց առաջ ասում է Ռազմիկ Մովսիսյանը՝ նկատի ունենալով էքսկավատորը:

ծրագրերի ընդհանուր ծավալը 2004 թվականի համեմատ **տասնապատիկ ավել** է:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում կազմակերպվել է **«Սյունիք ՊՌՈԴ-ԷՔՍՊՈ»** ցուցահանդես-վաճառք, հիմնականում տեղական հումք վերամշակող և սննդի արտադրությամբ զբաղվող մարզի գործարարների մասնակցությամբ:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկ, տեղական հումքի վերամշակման, սննդի և թեթև արդյունաբերության բնագավառներում ստեղծվել է **27 նոր ձեռնարկություն** և գրանցվել ավելի քան **20 անհատ ձեռնարկատեր**՝ շուրջ **800 նոր աշխատատեղով**, գործող ձեռնարկություններում ստեղծվել է ավելի քան **300 նոր աշխատատեղ**:

Սյունիքի մարզում 2010 թվականին անասնաբուծության արտադրանքը 2000 թվականի համեմատ ընթացիկ գներով **ավելացել է** մեկուկես անգամ:

2011 թվականին Սյունիքի մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

2011 թվականին Սյունիքի մարզում կովերի գլխաքանակը 2001 թվականի համեմատ ավելացել է տասը տոկոսով:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2001-2011 թվականներին Սյունիքի մարզում խոզերի գլխաքանակը կրկնապատկվել է:

Անասնաբուծության ծավալները Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Խոզերի գլխաքանակը Սյունիքի մարզում (հազ. գլուխ)



2006-2011 թվականներին Սյունիքում ոչխարների և այծերի գլխաքանակն ավելացել է մեկ քառորդով:

2002-2011 թվականներին Սյունիքի մարզում կաթի արտադրության ծավալն ավելացել է մեկ երրորդով:

Հավկիթի արտադրության ծավալները Սյունիքի մարզում (մլն. հատ)



2011 թվականին Սյունիքի մարզում արտադրվել է **կրկնակի ավելի** հավկիթ, քան 2002 թվականին:

2003-2010 թվականներին Սյունիքում բրդի համախառն արտադրությունն ավելացել է 30 տոկոսով:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են ավելի քան 18 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ և արտադրությամբ՝ շուրջ 60 գյուղատնտեսական կազմակերպություններ:

Սյունիք համայնքում գործող **«Սյունիք-մսամթերք»** ձեռնարկությունը 2007-2011 թվականներին գործարկել է կերերի սեփական արտադրություն, կաթի վերամշակման ժամանակակից ձեռնարկություն, զարգացնում է մեղվաբուծությունը, ստեղծել է մսի վերամշակման արտադրամաս:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում գործել է տոհմային երեք տնտեսություն, որոնք կատարել են ավելի քան **7 հազար գլուխ** խոշոր եղջերավոր անասունի արհեստական սերմնավորում, ընդ որում, սերմնավորման աշխատանքների ծավալը մարզում տարեց-տարի ավելանում է:

2008-2009 թվականներին **Եղվարդ** համայնքում կառուցվել է ալրաղաց:

«Սյունիք-մսամթերք» ձեռնարկությունում

2012 թվականին Սյունիքի մարզի ինը՝ **Խնձորեսկ, Վերիշեն, Ակներ, Գորայք, Խնածախ, Խոզնավար, Վաղատուր, Տաթև, Ծղուկ** համայնքներում կգործեն համայնքային կոոպերատիվներ: **Խնձորեսկ, Վերիշեն, Խնածախ, Խոզնավար, Վաղատուր** համայնքները, մասնավորապես, նախատեսել են համատեղ իրականացնել իրենց վարչական տարածքներում գտնվող շուրջ **4 հազար հա** հեռագնա և շուրջ **5 հազար հա** գյուղամերձ արոտների ջրարբիացումը:

2011 թվականին Սյունիքի մարզից արտահանվել է **3,100 տոննա** կարտոֆիլ, շուրջ **հազար տոննա** բանջարանաբոստանային կուլտուրաներ, շուրջ **900 տոննա** աշնանացան ցորենի սերմացու, **200 տոննա** ձավարեղեն:

2011 թվականին Սյունիքի մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին մատակարարվել է շուրջ **4.5 միլիոն խորանարդ մետր** ջուր:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Սյունիքի մարզին հատկացրել է ավելի քան **320 տոննա որակյալ էլիտար աշնանացան ցորենի սերմացու**, որի շնորհիվ մարզում կատարվել է **1,060 հեկտար** աշնանացան ցորենի ցանք: Սյունիքի գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է **350 տոննա** ազոտական պարարտանյութ, ավելի քան **3.7 տոննա** ցինկի ֆոսֆիդ և այլ տեսակի թունանյութեր:

Հանրապետությունում այժմ արդեն «Սյունիք-կաթը» ու «Սյունիք-մսամթերքը» համբավ ունեն: Ձեռնարկության աշխատողներն ասում են՝ հայկական «բրենդ» է դարձել: Ընկերությունները վերջերս միացան և հիմա մեկ ապրանքանիշ է՝ «Սյունիք-կաթ»: «Մի խոսքով, երկու հաճույք համատեղել ենք»,– ասում է ընկերության հերթապահ անասնաբույժ Ռիմա Հարությունյանը: Հերթապահում է, որովհետև «անասունն էլ խնամքի կարիք ունի, վատանում է, տաքությունն է բարձրանում, պիտի օգնես»,– ասում է անասնաբույժը: Սարքավորումները ժամանակակից են, ձեռքի աշխատանքը հասցվել է նվազագույնի: Բայց անասնաբույժը կատակով նշում է, որ հնարավոր չէ ջերմությունը չափել գերժամանակակից մեթոդով. դիմում են ավանդական պապենական ջերմաչափին: Ռիմա Հարությունյանը ցանկանում է, անասնաբույժի մասնագիտությունը երիտասարդացած տեսնել: «Կան ձեռնարկություններ, ամսական աշխատավարձը հերիքում է ամեն ինչին, եկեք, մի խուսափեք, մեզ ջահելներ են պետք»,– դիմում է նա երիտասարդներին:

Ձեռնարկության պահեստապետ քսանյոթամյա Արա Հարությունյանն ամեն օր եռանդով է աշխատանքի գալիս: «Աշխատանքից գալիս եմ տուն, տեսնում երեք տարեկան աղջկաս, զբոսնում հետը, և աշխարհն արդեն իմն է»,– ասում է Արան: Ամսական միջին աշխատավարձը 120 հազար դրամ է: Ծնողների հետ է ապրում, բայց շուտով իր բնակարանն է ունենալու. հերթագրվել է «Բնակարաններ երիտասարդ ընտանիքներին» ծրագրում: «Հիպոթեքով ուզում եմ տուն առնել, կհասցնեմ, աշխատավարձը, ասում են, բարձրացվելու է, դե, կունենամ իմ օջախը»,– ոգևորությամբ ասում է Արան:

2011 թվականին **«Սոսու պուրակ»** պետական արգելավայրի հինգ հեկտարի վրա կատարվել է **3,670 տնկիների անտառալրացում**: Տնկարանում ազատված մակերեսը լրացվել է **3,300** սոսու տնկանյութով: Տնկվել է նաև երկու-երեք տարեկան **1,600** արևելյան սոսի և **140** ընկուզենի:

2009 թվականին, Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրիի լեռնաբազուկի հարավային լանջերի, ինչպես նաև **Մեղրի, Շվանիձոր** և **Նյուվադի** գետերի ջրահավաք ավազանների տարածքներում բնական էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, բնական պաշարների, բնության եզակի հուշարձանների, էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակմիջավայրերի պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով, Սյունիքի մարզում ստեղծվել է ավելի քան **34 հազար հեկտար** ընդհանուր մակերեսով **«Արևիկ»** ազգային պարկը: Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումը ապահովելու նպատակով ստեղծվել է **«Զանգեզուր»** պետական արգելավայրը՝ ընդգրկելով Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի գետի ավազանի վերին հատվածը և դրա ձախափնյա՝ Գեղի վտակի մերձափնյա՝ Բարգուշատ լեռնաշղթայի ձորակների տարածքները:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի շուրջ **30 համայնքներում** հիմնանորոգվել են ոռոգման համակարգեր, կառուցվել երրորդ կարգի ջրանցքներ, նորոգվել պոմպակայաններ. նշված ժամանակահատվածում կատարվել են ավելի քան **850 միլիոն դրամ** ընդհանուր ծավալով աշխատանքներ:

Միայն 2010 թվականին Սյունիքի մարզում մաքրվել և վերականգնվել է **410 կիլոմետր** ընդհանուր երկարությամբ ոռոգման ջրագիծ և ներքին ցանց:

Հանրապետության մարզերում 2010 թվականին **ամենամեծ ծավալով շինարարությունն** իրականացվել է Սյունիքի մարզում՝ շուրջ **42.6 միլիարդ դրամ** ընդհանուր ծավալով. 2010 թվականին Հայաստանի մարզերում շինարարության համախառն ծավալի գրեթե մեկ հինգերորդն իրականացվել է Սյունիքի մարզում: 2010 թվականին Սյունիքի մարզում ընթացիկ գներով իրականացվել է **տասնչորս անգամ ավելի** մեծ ծավալի շինարարություն, քան 2000 թվականին, **վեց անգամ ավելի**, քան 2003 թվականին և **կրկնակի ավելի**, քան 2005 թվականին:

2010 թվականին Սյունիքի մարզում իրականացվել է ընթացիկ գներով ավելի մեծ ծավալով շինարարություն, քան 2000 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին:

Շինարարության ծավալները Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Միայն 2009-2010 թվականներին՝ երկու տարում, Սյունիքում իրականացվել է ընթացիկ գներով **ավելի մեծ ծավալի** շինարարություն, քան 1998-2005 թվականներին՝ ութ տարում:

2010 թվականին հանրապետության մարզերում գործարկված հիմնական միջոցների ամենամեծ ծավալը Սյունիքում էր:

Շինարարության ծավալները ՀՀ մարզերում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Սյունիքի մարզի մասնաբաժինը ՀՀ մարզերում գործարկված հիմնական միջոցների ընդհանուր ծավալում, 2010թ.



2010 թվականին Հայաստանի մարզերում գործարկված հիմնական միջոցների ծավալի շուրջ մեկ երրորդը գործարկվել է Սյունիքում:

Միայն 2010 թվականին Սյունիքի մարզում գործարկվել են ընթացիկ գներով ավելի **մեծ ծավալով** հիմնական միջոցներ, քան նախորդ երեք տարիներին: 2010 թվականին՝ մեկ տարում, Սյունիքի մարզում գործարկված հիմնական միջոցների ծավալն ընթացիկ գներով տասը տոկոսով **գերազանցել է** 1998-2006 թվականներին՝ ինը տարում, գործարկված հիմնական միջոցների ծավալը միասին:

2010 թվականին Սյունիքում գործարկվել են ընթացիկ գներով ավելի մեծ ծա-

Հիմնական միջոցների գործարկման ծավալները Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



վալով հիմնական միջոցներ, քան 2005 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին:

2010 թվականին՝ մեկ տարում, Սյունիքում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով գերազանցել է 1998-2004 թվականներին՝ յոթ տարում կատարված աշխատանքների ծավալը:

2010 թվականին շինմոնտաժային աշխատանքների ծավալով Սյունիքը հանրապետությունում երրորդն էր՝ մայրաքաղաք Երևանից և Կոտայքից հետո: 2010 թվականին Սյունիքում իրականացվել են ընթացիկ գներով **երեք քառորդով ավելի ծավալով** շինմոնտաժային աշխատանքներ, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

2010 թվականին Սյունիքում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալը 2009 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Շինմոնտաժային աշխատանքների ծավալը Սյունիքի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Սյունիքի մարզում 2011 թվականին մանրածախ առևտրի շրջանառությունը **կրկնակի ավել էր**, քան 2004 թվականին և **մեկ երրորդով ավելի**, քան 2009 թվականին:

2011 թվականին Սյունիքի մարզում խանութների շրջանառությունը հասել է շուրջ **հինգ միլիարդ աննախադեպ ծավալի**:

2011 թվականին Սյունիքում խանութների շրջանառությունը 2002 թվականի համեմատ ավելացել է երեքուկես անգամ, 2006 թվականի համեմատ՝ ավելի քան կրկնապատկվել է, իսկ 2009 թվականի համեմատ՝ ավելացել է մեկ երրորդով:

2011 թվականին Սյունիքի մարզում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը **եռապատիկ ավելի էր**, քան 1999 թվակա-

2011 թվականին Սյունիքի մարզում ծառայությունների ծավալը 2005 թվականի եռապատիկն էր, նախաճգնաժամային 2007 թվականի կրկնապատիկը, իսկ 2009 թվականի համեմատ՝ ավել էր 30 տոկոսով:

Մանրածախ առևտրի շրջանառությունը Սյունիքի մարզում (մլն. դրամ)



Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Սյունիքի մարզում (մլն. դրամ)



նին, 2004 թվականի շրջանառության **կրկնապատիկն** էր և մեկ հինգերորդով ավելի էր, քան 2008 թվականին:

2005-2010 թվականներին կրթության ծառայությունների ծավալը Սյունիքի մարզում **ավելացել է կրկնակի**: Նույն ժամանակահատվածում Սյունիքի մար-

2010 թվականին Սյունիքի մարզում տրանսպորտի ծառայությունների ծավալը 2004 թվականի համեմատ կրկնապատկվել է:



զում կրկնապատկվել է նաև տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալը:

2001-2011 թվականներին Սյունիքի մարզից արտահանման ծավալը տասնապատկվել է:

2011 թվականին հանրապետության մարզերում արտահանման ծավալի շուրջ **44 տոկոսը** բաժին է ընկնել Սյունիքին: Արտահանման ծավալով Սյունիքի մարզը Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին:



2011 թվականին Սյունիքի մարզում արտահանման ծավալը 2004 թվականի քառապատիկն էր և 2009 թվականի **ավելի քան կրկնապատիկը**: 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, Սյունիքում արտահանման ծավալն ավելացել է մեկ վեցերորդով:

2010 թվականին Սյունիքի մարզի արտահանման ծավալը **գերազանցել է** աշխարհում մեծությամբ տասնյոթերորդ տնտեսությունն ունեցող հարևան **Թուրքիայի 52 նահանգների**, այդ թվում՝ մինչև 1921 թվականը Հայաստանի Հանրապետության կազմում գտնվող **Արևելյան Հայաստանի**, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի պատմական տարածքներն ընդգրկող՝ **Կարս, Երզինջան (Երզնկա), Բայբուրթ (Բաբերդ), Արդահան, Արդվին, Բիթլիս, Մուշ, Վան, Էրզրում, Իգդիր, Էլայզիգ (Խարբերդ), Ամասիա, Սվազ, Բաթման, Բինգյոլ, Յոզգաթ, Քյութահիա, Դիարբեքիր, Շանլըուրֆա (Ուրֆա), Ափյոնքարահիսար** և այլ նահանգների արտահանման ծավալները:

2010 թվականին Սյունիքի մարզի արտահանման ծավալը գերազանցել է Թուրքիայի տասնինը նահանգների արտահանման ծավալը միասին:

2010 թվականին Սյունիքի մարզում գործարկվեց Տաթև-Հալիձոր գյուղերը միմյանց կապող **«Տաթևի թևեր»** ճոպանուղին: Աշխարհում աննախադեպ այս ճարտարագիտական կառույցը **5.7 կիլոմետր երկարությամբ** ձգվում է Որոտան գետի խոր կիրճի վրայով և կապում Հալիձոր ու Տաթև կայանները: Տաթև համայնքում վերակառուցվել է 17-րդ դարի ձիթհանը: «Տաթևի թևեր» ճոպանուղին յուրաքանչյուր օր սպասարկում է **մի քանի հարյուր ուղևորների** Սյունիքից, հանրապետության այլ մարզերից և աշխարհի տարբեր երկրներից: Ճոպանուղուց օգտվողների ավելի քան մեկ հինգերորդը հարակից գյուղերի բնակիչներն են, ովքեր ճոպանուղուց օգտվում են նաև որպես փոխադրամիջոց, ինչը նրանց համար անվճար է: Այցելուների ակտիվությունն հատկապես նկատվում է հանգստյան օրերին: «Տաթևի թևեր» ճոպանուղին կառուցել է **«Garaventa Doppelmayer Group»** (Շվեյցարիա-Ավստրիա) ընկերությունը, որի կառուցած որևէ ճոպանուղի երբևէ չի խափանվել և ոչ մի ուղևոր չի վնասվել երբեք: 2010 թվականին «Տաթևի թևերը» գրանցվել է **Գինեսի համաշխարհային ռեկորդների** գրքում:

Աշխարհի ամենաերկար՝ 5,720 մետր երկարություն ունեցող «Տաթևի թևեր» ճոպանուղին, ըստ տարածաշրջանի բնակիչների, փոխեց իրենց առօրյան: Ճոպանուղուց անվճար օգտվում են Հալիձոր, Տաթև, Շինուհայր, Խոտ, Սվարանց, Տանձատափ գյուղերի ավելի քան 5 հազար բնակիչ: 80-ամյա տաթևցի Սերյոժա Վասիլյանի խոսքով՝ ճոպանուղին «լավ պեն ա»: Գյուղացիները առանց փող երթևեկում են, ու բացի դրանից հենց իր ընտանիքին «եկամուտ է բերել»:

«Բա ոնց տուրիստները գալիս են մարդա իրեք հազար մանեթ են տալիս, մնում մեր տանը: Ես էլ ամաչում՝ երկու հազար մանեթ եմ ասում, որ էլի գան մեր տուն»,- պատմում է Սերյոժա պապը: Եթե ճոպանուղին նրա համար եկամուտի աղբյուր է, ապա Տաթևի դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Անդրանիկ Աղամալյանի համար առաջին հերթին փոխադրամիջոց: Քսաներեքամյա երիտասարդը Շինուհայրում է ապրում: «Մինչ ճոպանուղին 40-50 րոպե տևում էր, որ հասնում էի Տաթև: Մի էդքան հետ էի գալիս: Հիմա 12-15 րոպեում հասնում եմ աշխատանքի»,– ասում է Անդրանիկը: Նրա խոսքով, ժամանակից բացի նաև նյարդերն է խնայում: «Մինչև երկար ճանապարհով դպրոց էի հասնում, մի տեսակ հոգնություն էի զգում, հիմա թարմ եմ լինում, բարձրից տեսնելով գեղատեսիլ բնությունը՝ ոգևորվում եմ մի տեսակ»– պատմում է Անդրանիկը:

2012 թվականի տարեսկզբին Սյունիքի մարզում գործում էր **բանկային կազմակերպությունների 22** և **վարկային կազմակերպությունների 8 մասնաճյուղ**, ընդ որում, ֆինանսական կառույցների մասնաճյուղերից 13-ը ստեղծվել են 2007-2011 թվականներին:

2012 թվականի տարեսկզբին Սյունիքի մարզում գործում էր շուրջ 30 բանկոմատ:

Երուսուներեքամյա Արարատ Առաքելյանը Սյունիքի մարզի Անգեղակոթ գյուղի դպրոցում օժանդակ բանվոր է: Երեք երեխա ունի, չի դժգոհում. դպրոցում աշխատանքից բացի հող է մշակում: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպության Սիսիանի գրասենյակը Արարատի դիմումն է քննարկում վարկի տրամադրման վերաբերյալ: «Մի անգամ վարկ վերցրել եմ, սա էլ երկրորդ անգամ է, հողամաս ունեմ, գյուղատնտեսական վարկ եմ ուզում ստանալ»,– ասաց նա: Ասում է, շատերը չեն սիրում վարկեր, մտածում են «տոկոսի տակ են ընկնում»: Իր ընկերներին խորհուրդ է տալիս, վարկի դերը ճիշտ ընկալել: «Վարկը վերցնում ուտում են, պիտի գործ անեն, որ կարենան տոկոս էլ փակեն, եկամուտ էլ ունենան»,– համոզված է սիսիանցի երիտասարդը:

Ենթակառուցվածքները

Սյունիքի մարզում տարեց-տարի **ավելացել է** բեռնափոխադրումների ծավալը. եթե 1998 թվականին Սյունիքին բաժին էր ընկնում Հայաստանում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրված բեռների

Սյունիքի մարզի մասնաբաժինը Հայաստանում ավտոմոբիլային բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում



2010 թվականին՝ մեկ տարում, Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են ավելի մեծ ընդհանուր ծավալով բեռներ՝ շուրջ 38 միլիոն տոննա, քան 2000-2001 թվականներին՝ երկու տարում, ողջ հանրապետությունում:

ավելի քան 44 տոկոսը, ապա 2010 թվականին՝ **շուրջ 80 տոկոսը**:

2010 թվականին Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են **ավելի մեծ ծավալով բեռներ**, քան 1998-2005 թվականների ընթացքում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում:

2007-2010 թվականներին՝ չորս տարում, Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են **ավելի մեծ ծավալով բեռներ**, քան ողջ հանրապետությունում 1998-2003 թվականներին՝ վեց տարում: 2010 թվականին Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են **երեք անգամ ավելի մեծ** ծավալով բեռներ, քան 2000 թվականին, **կրկնակի ավելի**, քան 2004 թվականին և մեկ երրորդով ավելի, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

2010 թվականին Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը հատել է աննախադեպ **122 միլիոն տոննա կիլոմետր** ծավալի սահմանագիծը՝ ավելի, քան Հայաստանի Հանրապետության որևէ մարզում երբևէ: 2010 թվականին հանրապետության մարզերում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության **քառասուն տոկոսից ավելին** կատարվել է Սյունիքի մարզում: 2010 թվականին Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2005 թվականի **կրկնապատիկն էր**:

2010 թվականին Սյունիքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառությունը գերազանցել է 2002 թվականի բեռնաշրջանառության ծավալը հանրապետության բոլոր մարզերում միասին:

2005 թվականից Սյունիքի մարզում տարեց-տարի ավելացել է նախորդ ժամանակահատվածում աստիճանաբար նվազած ուղևորափոխադրումների ծա-

Բեռնաշրջանառության ծավալները Սյունիքի մարզում (մլն. տոննա-կմ)



վալը: Եթե 2004 թվականին Սյունիքում 1998 թվականի համեմատ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը նվազել էր շուրջ մեկուկես անգամ, ապա հետագա հինգ տարիներին տնտեսության ակտիվացման, զբոսաշրջության զարգացման և ուղևորափոխադրումների բնագավառում կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում ուղևորափոխադրումների ծավալներն **էականորեն ավելացել են**. 2010 թվականին Սյունիքի մարզում փոխադրվել է **երեք միլիոնից ավելի** ուղևոր, ավելի, քան երբևէ Սյունիքի մարզում, կրկնակի ավելի, քան 2004 թվականին: 2010 թվականին Սյունիքի մարզում ուղևորափոխադրումների ծավալը **գերազանցել է** նախաճգնաժամային 2007 թվականի ծավալը շուրջ մեկ հինգերորդով:

Ուղևորաշրջանառության ծավալները Սյունիքի մարզում (մլն. ուղևոր-կմ)



2007-2010 թվականներին՝ չորս տարում, ուղևորաշրջանառության ծավալը Սյունիքի մարզում գերազանցել է 2000-2006 թվականների՝ յոթ տարվա ցուցանիշը:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **Գորիս, Մեղրի Դավիթ Բեկ, Խնձորեսկ, Ալվանք, Հարթաշեն** համայնքներում վերականգնվել և հիմնանորոգվել են միջպետական մայրուղիների, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հատվածներ, վերակառուցվել և ընդլայնվել է **Մեղրի** մտնող կամուրջը:

2007-2011 թվականներին **Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Ագարակ** համայնքներում հիմանորոգվել և ասֆալտապատվել են ներհամայնքային ճանապարհներ:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզում միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման նպատակով հանրային միջոցներից տրամադրվել է ավելի քան **1.8 միլիարդ դրամ**, իսկ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար՝ **210 միլիոն դրամ**:

2009 թվականին **Շվանիձոր, Ալվանք** և **Նռնաձոր** համայնքներում ստեղծվել է արտաքին լուսավորության համակարգ:

2011 թվականին **Կապան-Մեղրի** այլընտրանքային ճանապարհի 86 կիլոմետր հատվածում անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են Արաքսի ափապաշտպան կառույցների ամրացման աշխատանքներ, վերականգնվել է 400 մ հատված:

Սյունիքի մարզում 2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը **երեք անգամ ավելի էր**, քան 2000 թվականին և **կրկնակի ավելի**, քան 2005 թվականին: 2007-2011 թվականներին

Սյունիքում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունն **ավելացել է** շուրջ մեկ երրորդով, իսկ մարզի գյուղական համայնքներում՝ **60 տոկոսով**:

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Սյունիքի մարզում (կմ)



2010 թվականին Սյունիքի մարզում գազամատակարարման գործող ցանցի երկարությունը **գերազանցել է** գազի բաշխիչ գործող ցանցի երկարությունը **մի շարք ԱՊՀ երկրներում**, ինչպես նաև տարածքով, բնակչությամբ և կենսամակարդակով Սյունիքի մարզին զգալիորեն գերազանցող մի շարք այլ պետություններում, այդ թվում՝ **Ղազախստանում, Կիպրոսում, Ֆիլիպիններում,**

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Սյունիքի մարզի քաղաքային բնակավայրերում (միավոր)



Լիբանանում, Սինգապուրում, Իսրայելում, Մակեդոնիայում, Տայվանում և այլն:

Եթե 2002 թվականին Սյունիքում գազաֆիկացված էր յուրաքանչյուր տասը բնակարանից և բնակելի տնից մեկը, ապա 2011 թվականի տարեսկզբին՝ գազամատակարարումից օգտվելու հնարավորություն ուներ **յուրաքանչյուր երկրորդ** բնակարան կամ բնակելի տուն, իսկ մարզի քաղաքային համայնքներում յուրաքանչյուր տասը բնակարանից և բնակելի տնից յոթը գազաֆիկացված էր:

2011 թվականի տարեսկզբին Սյունիքի մարզում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2002 թվականի համեմատ ավելի քան հնգապատկվել է՝ շուրջ 4,300-ից հասնելով 23,000-ի:

2002-ից 2011 թվականներին մարզի քաղաքային համայնքներում գազամատակարարումից օգտվող բնակարանների և բնակելի տների քանակը **վեցապատիկ ավելացել է**:

2006-2010 թվականներին Սյունիքի գյուղական համայնքերում սպառողներին մատակարարված գազի ծավալը կրկնակի ավելացել է:

Բոլոր սպառողներին բաց թողնված գազը Սյունիքի մարզում (մլն. խմ)



2010 թվականին Սյունիքի մարզում սպառողներին մատակարարվել է **երեքուկես անգամ**, իսկ մարզի գյուղական համայնքներում՝ **վեցապատիկ ավելի** ծավալով բնական գազ, քան 2001 թվականին:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **քաղաքային և գյուղական 17 համայնքներում** կառուցվել, վերականգնվել, վերակառուցվել և վերանորոգվել են գազատարեր: Գազաֆիկացվել են **Սիսիան, Խնածախ, Սպանդարյան, Շինուհայր, Շաղատ, Աճանան, Ույծ, Նորավան, Աղիտու, Անգեղակոթ, Շաքի, Մուցք, Իշխանասար, Արավուս, Կոռնիձոր** և **Տեղ** համայնքները, թաղամասեր և բազմաբնակարան շենքեր՝ Կապան և Գորիս քաղաքներում:

Սյունիքի մարզում 2010 թվականին ջրամատակարարման փողոցային ցանցի ընդհանուր երկարությունը 2003 թվականի համեմատ **ավելի էր** շուրջ մեկ յոթերորդով: Նույն ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման ջրատարերի ընդհանուր երկարությունը Սյունիքում **ավելացել է 40 տոկոսով**: Ջրատարերի ընդհանուր երկարությամբ Սյունիքը հանրապետությունում երրորդն է՝ մայրաքաղաք Երևանից և Լոռու մարզից հետո:

Բնակավայրերի ջրատար ցանցերի միագիծ երկարությունը Սյունիքի մարզում (կմ)



2002-2010 թվականներին Սյունիքի մարզում ջրամատակարարման ցանցում կատարված աշխատանքների և կառավարման ավելի արդյունավետ համակարգերի ներդրման արդյունքում **կրճատվել են** խմելու ջրի կորուստները:

2010 թվականին Սյունիքում սպառված ջրի ծավալը 2002 թվականի համեմատ **կրճատվել է** ավելի քան մեկուկես անգամ:

2010 թվականին Սյունիքի մարզում կոյուղու համակարգի փողոցային ցանցի երկարությունը մեկ երրորդով ավելի էր, քան 2003 թվականին:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **քաղաքային չորս** և **գյուղական ավելի քան քառասուն** համայնքներում կառուցվել, վերականգնվել և հիմնանորոգվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր:

Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, Գեղի, Շաքի, Բալաք, Քաշունի, Վերին Խոտանան, Դավիթ Բեկ, Շիկահող, Աղիտու, Որոտան, Եղվարդ, Տանձավեր, Ալվանք, Շենաթաղ, Վաղատուր, Հացավան, Տոլորս, Խոզնավար, Սառնակունք, Կարճևան, Առաջաձոր, Մուցք, Քարաշեն, Ախլաթյան, Սալվարդ, Ծղուկ, Արավուս, Խոտ, Խնածախ, Խնձորեսկ, Ծավ, Գորայք, Վարդանիձոր, Լեհվազ, Քաշունի, Հալիձոր, Նռնաձոր, Բռնակոթ, Տեղ, Ագարակ համայնքներում կառուցվել, վերակառուցվել և վերանորոգվել են խմելու ջրագծեր, ջրատարեր ու ջրամատակարարման ցանցեր:

Կապան, Սրաշեն, Հարթաշեն, Քարահունջ համայնքներում կառուցվել կամ վերանորոգվել են կոյուղու համակարգերը:

Գորայք և **Լծեն** համայնքներում կառուցվել և վերանորոգվել են ջրի կապտաժներ, ջրամբարներ և ջրընդունիչ ավազաններ:

2011 թվականին հիմնանորոգվել է **Կապան** քաղաքի ջրամատակարարման ցանցը, առանձին թաղամասերում կառուցվել են ներքին նոր ցանցեր:

Հիմնանորոգվել է **Ագարակի** խմելու ջրի մաքրման կայանը, կառուցվել **Կարճևան** գյուղի խմելու ջրի ներքին նոր ցանցը: Հիմնանորոգվել է շուրջ երեք կիլոմետր ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման և մոտ 500 մետր ջրահեռացման ցանց:

Սյունիքի մարզում 2010 թվականին քաղաքների փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ քառորդով: Նույն ժամանակահատվածում Սյունիքի քաղաքների բարեկարգված փողոցների և անցումների երկարությունն ավելացել է 27 տոկոսով:

Քաղաքների բարեկարգված փողոցների, անցումների ընդհանուր երկարությունը Սյունիքի մարզում (կմ)



2001-2010 թվականներին Սյունիքի քաղաքային համայնքներում շուրջ հինգ տոկոսով ավելացել է փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը:

2007-2011 թվականներին հանրապետության մարզերում այգիների և բակերի բարեկարգմանն ուղղված կապիտալ ներդրումների ավելի քան 40 տոկոսը հատկացվել է Սյունիքի մարզին:

2007-2011 թվականներին **Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի** և **Քաջարան** քաղաքներում, ինչպես նաև **Գեղանուշ, Ծավ, Դավիթ Բեկ, Եղվարդ, Արծվանիկ** համայնքներում կառուցվել են խաղահրապարակներ և կանգառներ, բարեկարգվել է **Գորիսի** «Ավանգարդ» թաղամասը, վերակառուցվել **Սիսիան** քաղաքի կենտրոնական հրապարակը, բարեկարգվել **Գետափ** թաղամասը, վերանորոգվել է **Կապանի** Վազգեն Սարգսյանի անվան քաղաքային զբոսայգին:

2008-2009 թվականներին Սիսիանի տարածաշրջանի **Անգեղակոթ, Դարբաս, Տոլորս** և **Ծղուկ** համայնքներում կատարվել են ջրամբարների պատվարների անտանգության ապահովմանն ուղղված աշխատանքներ:

2007-2011 թվականներին **Գորիս** քաղաքում մաքրվել և բարեկարգվել է **Վարարակն** գետի հունը, կառուցվել են հենապատեր, **Կապան** քաղաքում մաքրվել են **Վաչագան** և **Ողջի** գետերի հուները, **Մեղրու** տարածաշրջանում ամրացվել են **Արաքս** գետի ափերը:

2011-2012 թվականներին կատարվել են **Սիսիանի** երկու ջրավազանների սանիտարական մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

2010 թվականին Սյունիքի մարզում կառուցվել է շուրջ **60 տիպային աղբավայր**, կազմվել են սանիտարական մաքրման սխեմաներ:

2011 թվականին **Սիսիան** և **Գորիս** քաղաքներում բացվել են նորացված փոստային մասնաճյուղեր, իսկ **Տաթև, Ագարակ, Քաջարան, Կապան, Սիսիան, Գորիս** համայնքներում՝ փոստային բաժանմունքներ:

Սյունիքի մարզի **70 գյուղական համայնքներ** ապահովված են համակարգչային տեխնիկայով, գործում է ինտերնետային կապ: Սյունիքի մարզի բոլոր 109 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն էլեկտրոնային հասցեներ, 5 քաղաքային համայնքներ ունեն պաշտոնական վեբ-կայքեր և համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով առցանց **էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն** են իրականացնում մարզպետարանի, ինչպես նաև համակարգին կից այլ մարմինների հետ:

«Բնակիչը կարող է այսօր մտնել փոստի բաժանմունքը և ստանալ տարբեր բանկային ծառայություններ, պլյուս՝ ամեն նոր բաժանմունքների մասնաճուղերուն մեջ ըլլալու է ինտերնետ ծառայություն, ֆաքս, սքան, տպագրություն և կոմերսիոյի մաս, որ կարողանան մարդիկ օգտվին՝ առանց Երևան, կամ մեծ քաղաքների մոտիկանալու: Մենք «Լա փոստ»-ի հետ պայամանգիր կնքեցինք՝ այդ օպըրեյշընների տեսակետով ռեինջընիրինգ ընել Հայփոստը: Ուրեմն, շրջանների ռութինգները բոլորը փոխվելու են, և նոր մոդելով աշխատելու ենք՝ միջազգային նոր տեքնալոգիաներով»:

Պաբլո Գեչիդջյան, «Հայ փոստ» կառավարման խորհրդի նախագահ

Տունը

Սյունիքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2011 թվականին՝ 2000 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ երրորդով, իսկ մարզի գյուղական բնակավայրերում՝ ավելի քան մեկուկես անգամ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում (հազ. քմ)



2011 թվականին Սյունիքում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2000 թվականի համեմատ կրկնապատկվել է, իսկ քաղաքային համայնքներում ավելացել է գրեթե երեքուկես անգամ:

2011 թվականին Սյունիքի մարզի քաղաքային բնակավայրերում բնակելի տների (առանձնատների) քանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ ութ, իսկ դրանց ընդհանուր մակերեսը՝ 40 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Սյունիքի գյուղական համայնքներում բնակելի տների ընդհանուր մակերեսն **ավելացել է** 40 տոկոսով:

2010 թվականին Սյունիքի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2000 թվականի համեմատ ավելացել է **երկուսուկես անգամ**: Նույն ժամանակահատվածում Սյունիքում բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն ավելացել է ութապատիկ:

2010 թվականին Սյունիքի մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Սյունիքի մարզում (քմ)



Գյուղական վայրերում գտնվող բնակելի տների ընդհանուր մակերեսը Սյունիքի մարզում (հազ. քմ)



նշանակության, առուվաճառքի գործարքների քանակը 2002 թվականի համեմատ **երեսունյոթ անգամ ավելի էր**: 2010 թվականին Սյունիքի մարզում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2006 թվականի համեմատ ավելացել է 70 տոկոսով:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի զարգացման նպատակով հանրային աղբյուրներից կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների գրեթե մեկ հինգերորդն ուղղվել է սյունեցիների բնակարանային խնդիրների լուծմանը:

2012 թվականին **Կապան** քաղաքում շահագործման կհանձնվի երեք մասնաշենքից բաղկացած **335 բնակարանով բնակելի համալիր**՝ մինչև 35 տարեկան երիտասարդների, կամ այն երիտասարդ ընտանիքների համար, ուր ամուսինների տարիքային հանրագումարը չի գերազանցում 70 տարին:

2011 թվականից **Գորիս** քաղաքում կառուցվում է **22 բնակարանանոց** սոցիալական տան նոր շենք:

2007-2011 թվականներին **Լեռնաձոր** համայնքում փայտյա տներում բնակվող ընտանիքների համար կառուցվել են բնակարաններ: 2010 թվականին Սյունիքի մարզում սոցիալապես անապահով անօթևան շուրջ **15 ընտանիք** ապահովվել է բնակարանով:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **Կապան, Քաջարան** և **Սիսիան** քաղաքներում վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի հարթ և լանջավոր տանիքներ, մուտքեր, բազրիքներ, աստիճանավանդակներ և վերելակներ:

«Բնակարանը իսկապես անհրաժեշտություն է, քանի որ ուզում ենք առանձին ապրել: Շատ, շատ ուրախ ենք, որ վերջապես կունենանք մեր անկյունը»:

Արման Ոսկանյան, Ալլա Թամրազյան, Կապանի բնակիչներ

Աշխատանքն ու վարձատրությունը

Սյունիքի մարզում տարեց-տարի **ավելացել է** աշխատողների վարձատրության մակարդակը: 2010 թվականին Հայաստանում աշխատողների միջին ամսական անվանական **ամենաբարձր աշխատավարձը** Սյու-

2010 թվականին Սյունիքի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձն ավելի բարձր էր, քան Ուկրաինայում և Մոլդովայում, ինչպես նաև ԱՊՀ մի շարք այլ երկրներում:

2000-2010 թվականներին Սյունիքի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձն ավելի քան հնգապատկվել է:

նիքում էր: 2010 թվականին Սյունիքի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2003 թվականի **եռապատիկն էր** և 2005 թվականի **կրկնապատիկը**: 2010 թվականին, նախորդ տարվա համեմատ, Սյունիքի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձն ավելացել է 18 տոկոսով:

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը Սյունիքի մարզում (հազ. դրամ)



Տնտեսության տարբեր հատվածներում աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աստիճանական ընդլայնման արդյունքում Սյունքի մարզում 2003 թվականից տարեց-տարի **կրճատվել է** չզբաղված, այդ թվում՝ գործազուրկ քաղաքացիների թիվը: Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերի շնորհիվ գործազրկության մակարդակը Սյունիքում շարունակել է նվազել անգամ մարզի արդյունաբերական համալիրի և գյուղատնտեսության համար աննպաստ ժամանակահատվածում և ֆինանսատնտեսական ծանր ճգնաժամի տարիներին: 2003 թվականի համեմատ՝ 2010 թվականին չզբաղված քաղաքացիների թիվը Սյունիքում կրճատվել է **ավելի քան եռապատիկ,**

իսկ 2005 թվականի համեմատ՝ **կրկնապատիկ**: Միայն 2010 թվականին՝ մեկ տարում, Սյունիքի մարզում չզբաղվածների թիվը նվազել է մեկ քառորդով:

2010 թվականին զբաղված սյունիքցիների **մեկ երրորդն** աշխատում էր ծառայությունների, իսկ նրանցից յուրաքանչյուր **վեցերորդը**՝ արդյունաբերության ոլորտում: Արդյունաբերության մեջ զբաղվածների տեսակարար կշռով Սյունիքի մարզը զիջում է միայն Կոտայքին. Սյունիքում արդյունաբերության ոլորտում է աշխատում զբաղվածների **17 տոկոսը**՝ շուրջ 8,700 մարդ: 2006-2010 թվականներին շինարարության մեջ զբաղվածների թիվը Սյունիքի մարզում **ավելացել է 44 տոկոսով**:

Սյունիքի մարզում տարեց-տարի հետևողականորեն ավելացել է զբաղվածների ներգրավումը տնտեսության ոչ պետական հատվածում. եթե 2002 թվականին Սյունիքում ոչ պետական հատվածում աշխատում էր զբաղվածների ընդամենը 68 տոկոսը, ապա 2010 թվականին՝ արդեն 80-ը: 2002-2010 թվականներին Սյունիքի մարզում ոչ պետական հատվածում զբաղվածների թիվն ավելացել է շուրջ մեկ քառորդով:

2009 թվականին **Կապան** քաղաքում առաջին անգամ տեղի է ունեցել աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցել է շուրջ **հիսուն գործատու**: Մասնակիցների թվում են **Կապանի պղնձամոլիբդենային կոմբինատը**, **«Դինո գոլդ մայնինգ» ընկերությունը, Կապանի բժշկական կենտրոնը, Քաջարանի բժշկական կենտրոնը**, գործատուներ մարզի բոլոր քաղաքներից: Տոնավաճառին ներկայացվել է ավելի քան **180 թափուր աշխատատեղ**:

2009-2011 թվականներին Սյունիքի մարզում վարձատրվող հասարակական աշխատանքների ավելի քան 185 ծրագրերում ընդգրկվել է ավելի քան **2,120 գործազուրկ**: Ավելի քան 175 միլիոն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքների շնորհիվ Սյունիքի քաղաքային և գյուղական շուրջ 60 համայնքներում մաքրվել, նորոգվել և բարեկարգվել են ճանապարհներ, փողոցներ, մայթեր, խաղահրապարակներ և սոցիալական նշանակության ենթակառուցվածքներ:

Միայն 2010 թվականին Սյունիքի մարզում ավելի քան **100 գործազուրկ** ձեռք է բերել նոր մասնագիտություն:

Կրթությունը

Սյունիքի մարզում 2010 թվականին նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2006 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

2010 թվականին Սյունիքի մարզի քաղաքային համայնքներում գործող նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** մեկ քառորդով:

2010 թվականին Սյունիքի նախադպրոցական հաստատություններում ման-

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը Սյունիքի մարզում



կավարժների թվաքանակը 2004 թվականի համեմատ **ավելացել է** գրեթե մեկ տասներորդով:

2010 թվականին Սյունիքում մեկ նախադպրոցական հաստատություն միջին հաշվով հաճախել է ավելի շատ երեխա, քան 1998-2010 թվականներին որևէ տարում:

2001-2010 թվականներին Սյունիքում մեկ նախադպրոցական հաստատություն միջին հաշվով հաճախող երեխաների թիվն **ավելացել է 40 տոկոսով**:

2010 թվականին Սյունիքի նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերը 2001 թվականի համեմատ **նվազել են կիսով չափ**:

2010 թվականին Սյունիքի մարզում գործել է նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական **կրկնակի ավելի շատ** հաստատություն, քան 2008 թվականին:

2010 թվականին Սյունիքի մարզում գործող արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների թվաքանակը 2008 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ երկու երրորդով:

2010 թվականին Սյունիքի արհեստագործական ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժների թվաքանակը 2008 թվականի հա-

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը Սյունիքի մարզում (մարդ)



մեմատ մեծացել է ավելի քան երկուսուկես անգամ:

2010/2011 թվականներին Սյունիքը բարձրագույն ուսումնական հաստատություններում և դրանց մասնաճյուղերում սովորողների **առավել մեծ թվա-**

2010/2011 ուսումնական տարում Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր գրեթե եռապատիկ ավելի շատ ուսանող, քան 2002/2003 ուսումնական տարում:

քանակ ունեցող երեք մարզերի թվում էր: 2002-ից 2011 թվականներին Սյունիքի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման անվճար համակարգում ընդգրկված ուսանողների թվաքանակն **ավելացել է գրեթե երկուսուկես անգամ**, իսկ վճարովի համակարգում ընդգրկված ուսանողների թվաքանակը **եռապատկվել է**:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը Սյունիքի մարզում (մարդ)



2010 թվականին Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող դասախոսների թվաքանակը 2006 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ 8 տոկոսով:

Գորիսի պետական համալսարանը

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **քաղաքային չորս** և **գյուղական 18** համայնքներում հիմնանորոգվել են նախադպրոցական ուսումական հաստատություններ. վերանորոգվել են նախակրթարանների շենքեր և դահլիճներ, ննջասենյակներ և խոհանոցներ, նորոգվել տանիքներ, խմելու ջրագծեր և սանիտարական հանգույցներ, կառուցվել են խաղահրապարակներ, մոնտաժվել ջեռուցման և գազամատակարարման համակարգեր:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական **40 համայնքներում** կառուցվել և հիմնանորոգվել են հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումական հաստատություններ:

2007-2011 թվականներին **Սրաշեն, Արավուս, Եղեգ, Իշխանասար, Նռնաձոր, Լիճք, Վարդանիձոր համայնքներում կառուցվել են դպրոցական նոր շենքեր**, իսկ **Աշոտավան, Խոտ, Շաքի, Ծավ, Հալիձոր, Դարբաս, Գորայք** համայնքներում՝ խաղահրապարակներ ու պուրակներ:

2007-2011 թվականներին **Գորիս, Սիսիան, Մեղրի, Գեղանուշ, Մուցք,**

Սալվարդ, Հալիձոր, Ն.Խնձորեսկ, Խնածախ, Տանձատափ, Տանձավեր, Դավիթ Բեկ, Աճանան, Քարաշեն, Ախլաթյան, Անգեղակոթ, Տեղ, Խոզնավար, Որոտան, Շվանիձոր, Սառնակունք, Շինուհայր, Լոր համայնքներում մասնակի և հիմնական նորոգման են ենթարկվել դպրոցներ, վերանորոգվել են **Գորիսի պետական համալսարանի**, **Գորիսի հենակետային վարժարան-դպրոցի, Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղի, Կապանի թիվ 2 հատուկ կրթահամալիրի, Սիսիանի թիվ 1 հատուկ դպրոցի** շենքերը:

2011 թվականից Կապանում փլված թիվ 2 ավագ դպրոցի համար եռահարկ **նոր շենք** է կառուցվում:

Նախկինում Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղ՝ **Գորիսի պետական համալսարանը** 2006 թվականից արդեն գործում է որպես առանձին համալսարան: 2012 թվականի տարեսկզբին համալսարանում 11 մասնագիտություններով սովորում է շուրջ **2 հազար ուսանող**:

Միայն 2011 թվականին Սյունիքի մարզի դպրոցներին տրամադրվել է **15 լրակազմ լաբորատոր սարքավորում** և **50 համակարգիչ**: 2011 թվականին Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդհանուր առմամբ գործում էր ավելի քան 1020 համակարգիչ՝ համապատասխան սարքավորումներով: 2012 թվականի տարեսկզբին Սյունիքի մարզում հանրակրթական մեկ դպրոցի հաշվով միջինում կա 9 համակարգիչ, յուրաքանչյուր 100 երեխայի բաժին է ընկնում 6 համակարգիչ, ավելի քան 75 դպրոց ապահովված է ինտերնետային կապով, 104 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ:

2011 թվականին Սյունիքի մարզի **35 դպրոցում** գործում էր լոկալ ջեռուցման համակարգ:

2011 թվականին Սյունիքի մարզում վերապատրաստվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ **1,700 մանկավարժ**, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավելի քան **260 դաստիարակ** և **տնօրեն**:

Հանրապետության մարզերից **առաջինը** Սյունիքում է ներդրվել **հեռակառավարման ծրագրով ուսուցման մեթոդը**, որը հնարավորություն է ընձեռել սյունեցի դպրոցականներին անմիջականորեն մասնակցել մայրաքաղաքում անցկացվող դասապրոցեսներին:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզի **չորս դպրոցներում** կազմակերպվել է ներառական փորձարարական ծրագրի ներդրումը:

2010 թվականին Սյունիքի դպրոցներում կատարված արտաքին գնահատման արդյունքներով մարզը հանրապետությունում զբաղեցրել է **երկրորդ տեղը**:

2010 թվականին Սյունիքի հանրակրթական դպրոցների աշակերտների «Սահմանադրություն և իրավունք» հավաքականը հանրապետական օլիմպիադայում նվաճել է **առաջին մրցանակը**:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների ավելի քան **65 աշակերտներ** առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում արժանացել են դիպլոմների և գովասանագրերի: Մեկ աշակերտ ֆիզիկա առարկայից մասնակցել է **միջազգային օլիմպիադայի**: Օլիմպիական լավագույն արդյունք ունեցող վեց աշակերտներ ամառային հանգիստն անցկացրել են արտերկրի ծովափնյա ճամբարներում:

2011 թվականին «Իմ համայնքը» թեմայով շարադրության հանրապետական մրցույթում առաջին գլխավոր մրցանակ է շնորհվել սյունեցի **Վահագն Գալստյանին**:

«Մեծ հաճույքով եմ դպրոց գնում. շատ լավ վերանորոգած է և շատ գեղեցիկ է մեր դպրոցը, պայծառ»:

Կապանի 3-րդ միջնակարգ դպրոցի աշակերտ

Առողջապահությունը

Հանրապետության մարզերում տասը հազար բնակչի հաշվով միջին բուժանձնակազմի թվաքանակով Սյունիքը երկրորդն է՝ զիջելով միայն Շիրակին: 2010 թվականին Սյունիքի մարզում միջին բուժանձնակազմի թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով **ավելացել է** մեկ տասներորդով:

Միջին բուժանձնակազմի թվաքանակը Սյունիքի մարզում (մարդ)



2010 թվականին Սյունիքի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը տասը հազար բնակչի հաշվով 2005 թվականի համեմատ **ավելացել է** մեկ ութերորդով:

Սյունիքի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում տարեց-տարի **ավելացել է** հաճախումների քանակը:

2010 թվականին Սյունիքի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում 2003 թվականի համեմատ հաճախումների թիվը կրկնապատկվել է:

2010 թվականին Հայաստանում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ շնչի հաշվով հաճախումների **ամենամեծ քանակը** Սյունիքի մարզում էր՝ հինգ հաճախում, ավելի, քան մայրաքաղաք Երևանում: Սյունիքի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ շնչի հաշվով հաճախումների քա-

նակը 2001 թվականի համեմատ **կրկնապատկվել է**, իսկ 2007 թվականի համեմատ՝ **ավելացել է 28 տոկոսով**:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզում կատարված կապիտալ ներդրումների ավելի քան մեկ վեցերորդն ուղղվել է առողջապահական հաստատությունների զարգացմանը:

2007-2011 թվականներին հանրապետության մարզերում առողջապահական հաստատություններում կատարված կապիտալ ներդրումների ավելի քան 30 տոկոսը հատկացվել է Սյունիքի մարզին:

Սյունիքի բաժինը ՀՀ մարզերում առողջապահության ոլորտում 2007-2011թթ. իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում



2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **երեք քաղաքային** և **երկու գյուղական** համայնքներում կատարվել են կապիտալ ներդրումներ՝ մարզում առողջապահական հաստատությունների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման նպատակով: Եվս **31 գյուղական** համայնքների առողջապահական հաստատություններում իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

2010 թվականից սկսել է գործել **«Կապանի ԲԿ»** հեմոդիալիզի բաժանմունքը:

2011 թվականին սկսվել է **Կապանի բժշկական կենտրոնի**, **Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի** արդիականացման գործընթացը: 2011

Գորիսի վերակառուցված բժշկական կենտրոնում

թվականին սկսվել է **Քաջարանի բժշկական կենտրոնի** պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցումը, ընթացքում է Սիսիանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքի վերանորոգումը:

2011 թվականին հիմնանորոգվել, անհրաժեշտ սարքավորումներով և գույքով հագեցվել է **Կապանի Բժշկական կենտրոնի** մանկական մասնաշենքը:

2011 թվականին **Գորիսում** բացվել է **«Զանգեզուր»** սրտաբանական կենտրոնը: Երկհարկանի բուժհաստատությունում գործում են էխոկարդիոգրաֆիայի, էլեկտրակարդիոգրաֆիայի, ռենտգեն, սթրես-թեսթավորման, զոնդավորման, վերակենդանացման կաբինետներ, արյան լաբորատորիա, շտապ օգնության սենյակ, ինչպես նաև ութ հիվանդասենյակ՝ երկուական մահճակալով: Հիվանդանոցն ունի կենտրոնական ջեռուցում և անհատական ջրամատակարարում: Հիվանդանոցը կահավորվել ու համալրվել է բուժտեխնիկայով և սարքավորումներով:

«Ոչ մի հին բան չի մնացել մեր կենտրոնում հիմնանորոգումից հետո, նույնիսկ՝ կահույք, էլ չեմ խոսում սարքավորումների մասին. բոլորը նոր են, ամենաժամանակակիցը: Այսօր սարքավորում ունենք.որից ոչ միայն Հայաստանում, այլ, թերևս, տարածաշրջանում անգամ չկա»:

Սլավիկ Ամիրյան, Գորիսի բժշկական կենտրոնի տնօրեն

Կապանի բժշկական կենտրոնը

2010-2011 թվականներին հիմնանորոգվել է **Գորիսի** բժշկական կենտրոնը, հագեցվել բժշկական ժամանակակից սարքավորումներով ու գույքով: Հաստատությունը որակյալ բուժծառայություններ է մատուցում քաղաքի և տարածաշրջանի բնակչությանը: Էապես կրճատվել է մայրաքաղաքի հիվանդանոցներ դիմողների թիվը: 2012 թվականին Գորիսի բժշկական կենտրոնի հակատուբերկուլոզային ծառայությունները՝ ստացիոնար, լաբորոտորիա, հակատուբերկուլոզային կաբինետ, կտեղափոխվեն պոլիկլինիկական մասնաշենք:

2007-2011 թվականներին **38 համայնքներում** վերանորոգվել է բուժկետը, **Տաթև** համայնքում՝ առողջության կենտրոնը, **Տեղ** համայնքում կառուցվել է ամբուլատոր-պոլիկլինիկա:

2011 թվականին Սյունիքի մարզին հատկացվել է **շտապ օգնության յոթ մեքենա**. երեք մեքենա՝ Կապանի, մեկական՝ Գորիսի, Սիսիանի, Մեղրիի և Քաջարանի բժշկական կենտրոններին: 109 համայնք ունեցող Սյունիքում կա շտապ օգնության 25 մեքենա և 24 բրիգադ: Մարզում վերապատրաստվել են շտապ օգնության 77 բժիշկներ, բուժքույրեր և վարորդներ:

2010 թվականին Սյունիքի մարզում ընտանեկան բժշկի կողմից սպասարկվում է մարզի բնակչության ավելի քան **83 տոկոսը**: Սյունիքում գործում է ավելի քան **60 ընտանեկան բժիշկ** և **160 ընտանեկան բուժքույր**, որոնք մաս-

նակցել են վերապատրաստման դասընթացների և ստացել համապատասխան որակավորում: Սյունիքի մարզում 101 բուժմանկաբարձական կետերում աշխատող բուժքույրերն ունեն ընտանեկան բուժքրոջ որակավորում:

2009-2011 թվականներին Սյունիքի մարզի բնակիչների բուժսպասարկման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվել է շուրջ **չորսուկես միլիարդ դրամ**, ընդ որում, 2011 թվականին Սյունիքի մարզում պետական պատվերի շրջանակներում առողջապահական ծառայությունների մատուցման նպատակով հատկացումների ընդհանուր ծավալը 2009 թվականի համեմատ ավելացել է մեկ հինգերորդով: Նշված ժամանակահատ-

Վաթսունամյա Սլավիկ Գրիգորյանը ութ տարի է, ինչ պետական պատվերի շրջանակներում հեմոդիալիզ է ստանում: Տարեկան երեք անգամ ավելի քան 320 կիլոմետր կտրում, հասնում էր Երևան, բայց հիմա ընդմանեը հինգ կիլոմետր է անցնում: «Մեր գյուղից՝ Շրվենանցից եմ գալիս: Նորմալ, անվճար սպասարկում են»,– ասում է Սլավիկը: Նրան բուժաշխատողները «քննադատ-գործիչ» են անվանում: «Բա անընդհատ խոսում եմ, վեր եմ լուծում ինչ կլինի, ոնց կլինի, հո հիվանդ լինելով կյանքը չի վերջանում»,– ասում է Սլավիկը:

Շինուհայրցի երեսունյոթամյա Արմինե Ասլանյանի մեծ որդին տասներկու տարեկան է, փոքրը՝ ՝ծնվել է այս տարվա մարտի 26-ին: Չորս տղա և երեք աղջիկ ունի Արմինեն: Ամուսինն էլի է ուզում երեխա, բայց Արմինեն դեմ է: «Ասի, ա՛յ մարդ, մեր ապուպապերն ասում էին յոթը որդով սեղան նստիք, հիմա յոթը կա հինչ ես օզում: Բայց նա էլ թե, պիտի յոթ տղա օնենան»,– ասում է Արմինեն և թվարկում երեխաների անունները՝ Մակիչ, Հրաչ, Վաչե, Նաիրի, Աշխեն, Լուսինե: Նորածին դստերը Եվա են կոչելու: Ծննդատնից գոհ է. դեռ սկզբից ասաց, որ «մաղարիչ» ո՛չ տվել է, ո՛չ էլ ուզել են: «Էնքան լավն են աշխատողները, որ իրանց տնից են շոր-մոր բերում, ասում են՝ Արմին կտանես տուն»,– ասում է շինուհայրցի կինը: Անասուններ ունեն, հավ, հողամաս: Բերքն ու կաթնամթերքը չեն վաճառում, իր իսկ խոսքով՝ «հազիվ խոխենցը բերանն ենք փակում»:

Յոթ երեխաներից երեքը գյուղում՝ տանն է ծննդաբերել: «Ցավերս բռնեցին, էլ չհասցրի գամ Գորիսի ծննդատուն, բայց էս անգամ որ մտա, ցավերս միանգամից թողեցին, որ տեսա ռեմոնտ արած, կուլտուրական հիվանդանոց ա»,– ասում է բազմազավակ մայրը: Գորիսի բժշկական կենտրոնը անցած տարի է նորոգվել: Բարեկարգ, կահավորված հիվանդասենյակներ, գերժամանակակից սարքավորումներ, ջեռուցում, նույնիսկ վերելակ կա՝ զարմացել էին կենտրոնի մանկաբարձական բաժանմունքի նորածին մայրերը: «Պա սենց տեղը հունց երեխա չունենաս, ուզում ես անընդհատ ծննդաբերես»,– կես կատակ, կես լուրջ ասում է Արմինեն:

վածում Սյունիքի մարզում աճել է նաև վճարովի բժշկական ծառայությունների ընդհանուր ծավալը՝ գերազանցելով 100 միլիոն դրամը:

Մշակույթն ու սպորտը

Ներկայացումների քանակը Սյունիքի մարզում



2010 թվականին Սյունիքի պետական մասնագիտացված թատրոնների հանդիսատեսների թվաքանակը 2004 թվականի համեմատ ավելացել է եռապատիկ, ինչը փաստում է Սյունիքի մարզում մշակութային կյանքի ակտիվացման մասին:

Սյունիքի մարզի պետական մասնագիտացված թատրոններում 2010 թվականին՝ 2004 թվականի համեմատ բեմադրվել է **երեք անգամ ավելի** շատ ներկայացում:

2010 թվականին Սյունիքի մարզում գործող մարզական խմբերի քանակը 2004 թվականի համեմատ **ավելացել է** երկու երրորդով:

2010 թվականին Սյունիքում մարզիկների թվաքանակը 2004 թվականի համեմատ ավելացել է շուրջ 70 տոկոսով, իսկ մարզի քաղաքային համայնքներում՝ ավելի քան երկու երրորդով:

Հանդիսատեսների քանակը Սյունիքի մարզում (հազ. մարդ)



Մարզական կազմակերպությունների ու խմբե-
րի քանակը Սյունիքի մարզում



2010 թվականին Սյունիքի մարզում մարզիչների թվաքանակը **մեկուկես անգամ ավելի էր**, քան 2004 թվականին:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **Կապան, Սիսիան, Մեղրի, Ագարակ** քաղաքներում և **Խնձորեսկ, Հարժիս, Անտառաշատ, Ագարակ, Եղվարդ, Տեղ, Անգեղակոթ և Բռնակոթ** գյուղական համայնքներում հիմնանորոգվել են մշակույթի կենտրոններ:

Կապան քաղաքում հիմնանորոգվել է Սյունիքի մարզային գրադարանը,

Կավարտ և **Բաղաբուրջ** թաղամասերի գրադարաններն ու ակումբները, **Հալիձորի բերդը**, **Կապանի թանգարանը, Արվեստի պետական քոլեջը, Ալեքսանդր Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը**, **Գորիս** քաղաքում՝ **Արամ Սաթյանի անվան երաժշտական դպրոցը, Ակսել Բակունցի տուն թանգարանը, Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը**, **Ույծ** համայնքում՝ գրադարանը: **Կապան** քաղաքի Վաչագան թաղամասում հիմնվել է պարասրահ:

2007-2011 թվականներին **Գեղանուշ** և **Սառնակունք** համայնքներում, ինչպես նաև **Կապան** քաղաքի **Բաղաբերդ, Կավարտ, Հալիձոր** թաղամասերում կառուցվել կամ հիմնանորոգվել են հանդիսությունների տներ:

2007-2011 թվականներին վերանորոգվել է **Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ Կուրիս** համայնքում, **Կարճևանի եկեղեցին, Ագարակի եկեղեցին, Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ Եղվարդ** համայնքում, **Որոտնավանքը՝ Վաղատին** համայնքում, **Ճակատեն** համայնքում կառուցվել է մատուռ:

Վերականգնվել է **Վահանավանքի** պատմամշակութային համալիրը:

Սյունիքի ադամանդը՝ Տաթևի վանական համալիրը, IX դ.

2007-2011 թվականներին վերանորոգվել է **Գորիս** քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցը, **Մեղրի** քաղաքի քաղաքային լողավազանը, **Կապան** քաղաքում՝ մարզադպրոցը, **Շղարշիկ** թաղամասի մարզադաշտը և **Բաղաբերդ** թաղամասի լողավազանը:

2007-2011 թվականներին Սյունիքի մարզի **Իշխանասար, Վարդանիձոր, Տանձատափ, Անգեղակոթ, Կոռնիձոր, Սրաշեն** համայնքներում հիմնանորոգվել են համայնքային կենտրոններ:

2011 թվականին **Կապանը** ճանաչվել է հանրապետության լավագույն քաղաքային մարզական համայնք:

2011 թվականին Սյունիքի մարզի վեց քաղաքային համայնքների շուրջ **80 երիտասարդ մարզիկ** ակտիվ մասնակցություն են ունեցել հինգերորդ համահայկական խաղերին՝ արժանանալով երեք բրոնզե և մեկ արծաթե մեդալի:

Սյունիքի մարզի դպրոցականների աղջիկների վոլեյբոլի թիմը հանրապետական խաղերում նվաճել է **առաջին մրցանակ**:

Ասմունքի երրորդ փառատոնի հանրապետական փուլում մարզը առաջին տարիքային խմբում նվաճել է **առաջին մրցանակ**, չորրորդ փառատոնում՝ արժանացել խրախուսական մրցանակի:

Գարեգին Նժդեհի 125-ամյակին նվիրված **«Դիպուկ հրաձիգ»** հանրապետական մրցումներում Սյունիքի մարզի թիմը գրավել է չորրորդ տեղը, իսկ անհատական մրցումներում՝ նվաճել **առաջին և երկրորդ մրցանակներ**:

2008 թվականին **Կապանի** մանկապատանեկան մարզադպրոցի սան **Ռոման Հարությունյանը** Ֆրանսիայում անցկացված ծանրամարտի պատանիների Եվրոպայի առաջնությունում գրավել է յոթերորդ տեղը:

2009 թվականին **Սիսիանի** մանկապատանեկան մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների թիմը Բուլղարիայում կայացած վոլեյբոլի միջազգային մրցաշարում

Գրիգոր Տաթևացու հուշարձանը Գորիսում

և Բաթումիում կայացած վոլեյբոլի միջազգային լողափնյա մրցաշարում նվաճել է **երկրորդ** մրցանակը:

2009 թվականին Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի սան **Հայկանուշ Բեգլարյանը** Բոսնիա-Հերցեգովինայի Սարաևո քաղաքում կայացած Եվրոպայի թիմային առաջնությունում՝ եռացատկ և հեռացատկ մարզաձևերում գրավել է **հինգերորդ** և **երկրորդ** տեղերը, իսկ Իսրայելում կայացած, Ֆրանկոֆոն երկրների մարզական խաղերի վազք և եռացատկ մարզաձևերում՝ **չորրորդ** և **վեցերորդ** տեղերը:

2009 թվականին Կապանի վարժարանի աշակերտ **Արփինե Թորոսյանը** Ճապոնիայում մասնակցել է **«Կենսաբանություն»** առարկայի միջազգային օլիմպիադային և արժանացել երկրորդ կարգի դիպլոմի:

2010-2011 թվականներին Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի սաները Թուրքիայում անցկացված աթլետիկայի պատանիների միջազգային մրցումներում հեռացատկ և վազք մարզաձևերում **նվաճել են մրցանակներ**:

2011 թվականին Կապանի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցի սան **Լևոն Աղասյանը** Ֆրանսիայի Լիլ քաղաքում անցկացված աթլետիկայի պատանիների աշխարհի առաջնությունում եռացատկ մարզաձևում գրավել է **վեցերորդ տեղը,** իսկ Թուրքիայում կայացած «Եվրոպական օլիմպիական պատանեկան օրեր» միջազգային մրցաշարում՝ **չորրորդ տեղը**:

2011 թվականին Իսլանդիայի Ռեյկյավիկ քաղաքում անցկացված աթլետիկայի Եվրոպայի թիմային առաջնությունում եռացատկ և վազք մարզաձևերում **Հայկանուշ Բեգլարյանը** և **Վալյա Ավագյանը** գրավել են **երկրորդ** և **յոթերորդ** տեղերը:

2011 թվականին Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի աշակերտուհի **Լաուրա Գաբրիելյանը** Մոսկվայում մասնակցել է ռուսաց լեզվի **«Սվետոզար»** միջազգային օլիմպիադային և արժանացել երկրորդ կարգի դիպլոմի:

Սոցիալական վիճակը

Սյունիքի մարզում ընդհուպ մինչև 2008 թվականի ֆինանսա-տնտեսական ճգնաժամը տարեց-տարի **կրճատվել է** աղքատության մակարդակը. 2004-2008 թվականներին Սյունիքում աղքատության մակարդակը կրճատվել էր 80 տոկոսով: Հետագա տարիներին ճգնաժամի հետևանքով աղքատության մակարդակը Սյունիքում աճել է գրեթե մեկ երրորդով: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ աղքատության հաղթահարմանն ուղղված թիրախավորված քաղաքականության արդյունքում Սյունիքի մարզում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2010 թվականից **նվազել է:**

2010 թվականին Սյունիքում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2009 թվականի համեմատ կրճատվել է շուրջ 30 տոկոսով:

Սյունիքի մարզում տարեց-տարի **նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը. 2003-2010 թվականներին նպաստառու ընտանիքների թիվը Սյունիքում նվազել է ավելի քան կիսով չափ: 2010 թվականին Սյունիքի մարզում նախաճգ-

Նպաստառու ընտանիքների քանակը Սյունիքի մարզում (հազար ընտանիք)



Էմիլ Ագուլյանը Բաքվից է հասել Երևան, հետո՝ Կապան: Իսկ Կարինե Գասպարյանը Երևանից է: Երկուսն էլ ծնողազուրկ են և տեղավորվել էին Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում: «Միասին մանկապարտեզ գնացինք, միասին՝ դպրոց, և սիրեցինք իրար»,– պատմում է քսանութամյա Կարինեն: Իսկ երբ Էմիլը նրան ամուսնանալու առաջարկություն է անում, լալիս է նույնիսկ, ասում, որ երկու տարով փոքր ես, ոնց կարելի է պսակվել: «Լացելով գնացի տնօրենի՝ Ռիտա Դավթյանի մոտ: Ռիտա մաման ծիծաղեց, կնաչեց Էմիլին ու ասաց, հարսանիքն անում ենք»,– հիշում են ամուսինները: Հարսանիքին Կապանի քաղաքապետ Արթուր Աթայանը մեկ միլիոն դրամ է նվիրում: Նորապսակները գումարը ավանդ են ձևակերպում բանկում: «Դե դպրոցի հանրակացարանում ապրում էինք, ամեն ինչ կար, ասեցինք փողը մնա, մի լավ բան կանենք, բայց չգիտեինք ինչ»,– պատմում են նրանք: Ծնվում է աղջիկը՝ Սառան: Զգալով, որ այլևս հնարավոր չէ հանրակացարանում ապրել՝ որոշում են տուն գնել: «Տունը գտանք, բայց փողը պակասում էր, տիկին Ռիտան այս անգամ էլ զանգեց և փող գտավ: Կապանի ճանապարհաշինարարական ձեռնարկության տնօրեն Արարատ Կարապետյանն էլ օգնեց և մենք այժմ այս մեկ սենյականոց բնակարանում ենք»,– ասում է Էմիլը: Իհարկե, կարելի է երկու սենյականոցի վերափոխել, բայց առայժմ հնարավորություն չունեն: «Մի քիչ փող աշխատեմ, հետո էլ Սառաս մեծանա, կմտածենք»,– ասում է ընտանիքի հայրը: Նա քաղաքային շուկայում բանվորություն է անում, նպաստ են ստանում, ապրում են սիրով ու համերաշխ: «Էմիլը սիրում ա ասել, Սառային բարով-խերով անենք, երկրորդը ցրցամ տանք»,– ծիծաղելով լրացնում է Կարինեն՝ համոզված լինելով, որ շատ երեխաներ կունենան:

նաժամային 2007 թվականի համեմատ նպաստառու ընտանիքների թիվը նվազել է գրեթե 40 տոկոսով:

2011 թվականին Սյունիքի մարզում տասը հազար բնակչի հաշվով գրանցվել է գրեթե **մեկուկես անգամ քիչ** հանցագործություն, քան միջինը հանրապետությունում և կրկնակի պակաս, քան հարևան Վրաստանում:

Սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ **100 երեխա** հաճախում է Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզի սոցիալապես անապահով ընտանիքների **340 դպրոցական** ամառային հանգիստն անցկացրել է Հանքավանի «Լուսաբաց» և «Հասմիկ» մանկական առողջարարական ճամբարներում:

2010 թվականին Սյունիքի մարզում նախկին ԽՍՀՄ խնայբանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում են ստացել Հայրենական մեծ պատերազմի շուրջ **200 վետերաններ**:

2010-2011 թվականներին Սյունիքի մարզի հաշմանդամներին **հատկացվել է** շուրջ 100 լսողական սարք, շուրջ 700 պրոթեզի և օրթեզի կոշիկ, կոշիկի ներդիր, ոտքի պրոթեզ, ձեռնափայտ, հենակ և քայլակ: 2011 թվականին ավելի քան 60 հաշմանդամի տրամադրվել է առողջարանային ուղեգիր:

2010 թվականին Սյունիքի մարզում շուրջ **90 հաշմանդամ** անվճար ստացել է առողջարանային ուղեգրեր:

Սյունիքի մարզում տարեց-տարի ավելացել է համայնքների եկամուտների հավաքագրման մակարդակը. եթե 2008 թվականին համայնքների եկամուտները հավաքագրվել են գրեթե 87, 2009 թվականին՝ շուրջ 89, իսկ 2010 թվականին՝ շուրջ **96 տոկոսով**, ապա 2011 թվականին Սյունիքի մարզում համայնքների եկամուտների հավաքագրումը կատարվել է **98 տոկոսով**՝ ընդհուպ մոտենալով հարյուր տոկոսանոց սահմանագծին:

Հայոց Զորանամակի ամենահզորն էր սյունեցին. քսան հազար հմուտ զորականն այսօր էլ ուժ է աշխարհի ցանկացած բանակում: Եվ Սյունաց տիրոջ գահն արքայի կողքին էր: Եվ արքա էր Սյունաց տերը՝ Սիսակ նահապետի զարմից:

Հայոց հողում վերջին պետականությունն էր Սյունիքի թագավորությունն իր անառիկ կրկնապարիսպ ու աշտարակաբերձ Բաղաբերդով, որ ապաստան էր ու վերջին հույս՝ զորականին, շինականին ու քահանային: Կանգուն էր Տաթևի վանքը՝ հայոց հոգևոր ուժի ու մտքի զորության կենտրոնը, կանգուն էր և Սյունաց պետականությունը: Եվ երբ բնության արհավիրքի ու քոչվորի հարվածների տակ ընկավ Տաթևի վանքը, սասանվեց ու խորտակվեց նաև հայոց պետականությունը:

Պատմությունը բիրտ ուսուցիչ է, իսկ նրա դասերից երես թեքողը՝ անմիտ: Սակայն իր դաժան դասերը սերտող ժողովուրդներին պատմության պարգևը շռայլ է՝ արժանապատիվ տեղ ապագայի արևի տակ:

Սյունեցին լավ վարդապետ է ու լավ աշակերտ: Սյունեցին պատմության դասերը սերտում է բոլորից լավ, քանզի դասագրքի էջերը գրված են իր արյամբ: Իսրայել Օրի, Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ. յուրաքանչյուրը հայոց միաբանության ու միասնականության մի հատոր է հեղինակել իր մտքի ու սրի զորությամբ, իր անկասելի նպատակասլացությամբ ու վարակիչ հավատով, իր վստահ խոսքով հուսահատ սրտեր է բոցավառել ու մարած շեներին դարձել հույս ու պատվար: Սյունաց բնաշխարհն է անսացել նրանց կոչին. լեռը դարձել է անպարիսպ ու ամրակուռ բերդ ու

կիրճը՝ խանդակ: Զանգեզուրի լեռնաշխարհը զորագրվել է իր տիրոջ՝ սյունեցու կանչով, մերժել է օտարի խարդավանքն ու խոյացել թշնամու վրա:

Գուցե Հայաստանն այսօր կանգուն է, քանզի ինը դար առաջ խորտակված Բաղաբերդի վերջին պաշտպանի հանգչող աչքերում թշնամին սարսուռով կարդաց հայոց զարմի հարատևության հանդեպ զորականի հավատը: Գուցե: Անվիճելի է մի բան. Բաղաբերդի անանուն պաշտպանի սերունդներն իրենց հողում կանգնած են սյունաց լեռներից ամուր, իսկ սելջուկ նվաճողից մնացել է՝ ոչինչ:

Վստահաբար, Հայաստանն այսօր կանգուն է, քանզի ինը տասնամյակ առաջ Զանգեզուրից հեռացող Լեռնահայաստանի վերջին պաշտպանը, որ անհավասար մարտում ջախջախել էր ոխերիմ թշնամու ողնաշարը, առյուծածին մոր աչքերում սերունդների հարատևության վստահությունը կարդաց: Անվիճելի է մի բան. Լեռնահայաստանը նվաճած պետությունը կործանվեց տասնամյակներ անց, իսկ սպարապետի սերունդը փլատակների տակից ելավ ամրացած ու անխորտակ:

Ելավ անցյալի դասերի հատորները հիշողության մեջ ու ապագայի հանդեպ վստահությունը՝ սրտում: Ելավ, որ հարատևի աշխարհում ամենահրաշագեղ հողում, ուր արարիչը դրախտի պարտեզից մի կտոր է մոռացել:

Հողում, ուր հանգչում է մի խրոխտ անցյալ, և մի փառավոր գալիք է ծաղկում:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Սյունիքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Սյունիքի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը սյունիքցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012